

28.04.2014

Ք. Իջևան

Ներկա էին խորհրդի բոլոր անդամները.

### Օրակարգ

1. *Նախապաշտպանության արդյունքների ամփոփում: Ամփոփիչ քննությունների և ավարտական աշխատանքների պաշտպանության նախապատրաստական աշխատանքների ընթացքը /Զեկուցող՝ Վ. Ալեքսանյան /:*
2. *Երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստման և անցկացման մասին հաշվետվություն /Զեկուցող՝ Վ. Ալեքսանյան /:*
3. *Ուսանողության շրջանում 2014թ. մարտին անցկացված դասավանդման որակի և արդյունավետության բարձրացման վերաբերյալ հարցումների արդյունքների քննարկում և ամփոփում /Զեկուցող Վ. Ալեքսանյան/:*
4. *Ընթացիկ հարցեր /Զեկուցող՝ Վ. Ալեքսանյան/:*

**ԼՍԵՑԻՆՆ**՝ Օրակարգի առաջին կետի վերաբերյալ ֆակուլտետի ղեկանը զեկուցեց, որ հինգ մասնագիտությունների գծով 2014թ. ապրիլ ամսին, համաձայն նախապես կազմված ժամանակացույցի, կազմակերպվել են նախապաշտպանություններ: Դրանք անցել են պատշաճ մակարդակով, մասնակցությամբ համապատասխան ամբիոնների առաջատար մասնագետների: Նախապաշտպանությունների ընթացքում շտկվել են աշխատանքներում տեղ գտած մեծ ու փոքր սխալներն ու թերությունները, վերջնականապես խմբագրվել են վերնագրերը: Ուսանողները հանգամանորեն իրազեկվել են գնահատման չափանիշերի մասին: Մինևույն ժամանակ ղեկանը ասաց, որ արդեն պատրաստ են ամփոփիչ քննությունների և ավարտական աշխատանքների պաշտպանության ժամանակացույցերը: Առանձին դեպքերում մի շարք ուսանողների աշխատանքներում նկատվեցին լուրջ և մեծածավալ թերություններ: Նշանակվել են լրացուցիչ նախապաշտպանություններ նման ուսանողների համար: Հաստատվել են ավարտական աշխատանքները ամբիոններ հանձնելու վերջնաժամկետները: Բոլոր մասնագիտությունների ամփոփիչ քննությունների քննական տոմսերը հանձնված են ուսումնական մաս:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** Վ. Ավագյանը, Վ. Բրուտյանը, Ռ. Նահապետյանը, Ա. Սարհատյանը, Ա. Մարդանյանը, Լ. Թումանյանը: Ելույթ ունեցողները շեշտեցին նախապաշտպանությունների պատշաճ մակարդակի մասին, ասելով, որ անհրաժեշտության դեպքում առանձին ուսանողների աշխատանքներ կվերանայվեն և կհամապատասխանեցվեն պահանջվող չափորոշիչներին:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝**

- *Հումանիտար գիտությունների ֆակուլտետի հինգ ամբիոնների կազմակերպած ավարտական աշխատանքների նախապաշտպանությունների գործընթացը համարել բավարար:*
- *Բավարար համարել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2013-2014 ուստարվա ամփոփիչ քննությունների և ավարտական աշխատանքների պաշտպանության կազմակերպման նախապատրաստական աշխատանքները և հաստատել ժամանակացույցը:*

**ԼՍԵՑԻՆ՝**

Օրակարգի 2-րդ կետի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Վ. Ալեքսանյանը: Ընթացիկ քննությունները անց են կացվելու թեստային համակարգով, որը նախապես որոշվել է տնօրինության կողմից: Սակայն նա նշեց, որ փոխվել է ընթացիկ քննությունների գնահատման կարգը: Յուրաքանչյուր առարկայի համար նախապես ամբիոնին տրված հարցաշարից դասախոսը պետք է կազմի նվազագույնը թեստի վեց տարբերակ: Թեստը պետք է իր մեջ պարունակի չորս թեմա, յուրաքանչյուր թեման՝ երկու ենթահարց: Նախատեսված թեստային համակարգի 4 թեմաներից յուրաքանչյուրի 1-ական ենթահարցին ճիշտ պատասխանելու դեպքում /4 ենթահարց/ ուսանողին պետք է գնահատել 2 միավոր, 3 ենթահարցին ճիշտ պատասխանելու դեպքում՝ 1 միավոր, 2 ենթահարցին ճիշտ պատասխանելու դեպքում՝ 0 միավոր:

Զեկուցողը նշեց, որ ընթացիկ ստուգումները կիրականացվեն գրավոր կամ բանավոր տարբերակով:

Նշվեց նաև, որ պատրաստ է 2013-2014 ուստարվա 2-րդ կիսամյակի 2-րդ ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների ժամանակացույցը:

Ընթացիկ քննությունների և ստուգումների անցկացման շրջանը կտևի սթ. մայիսի 19-ից մինչև մայիսի 31-ը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** Ա. Սարհատյանը, Ա. Մարդանյանը, Լ. Թումանյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝**

*Հաստատել Հունանիտար գիտությունների ֆակուլտետի 2013-2014 ուստարվա երկրորդ կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների ժամանակացույցը:*

#### **ԼՄԵՑԻՆ՝**

Օրակարգի 3-րդ կետի վերաբերյալ զեկուցող Վ. Ալեքսանյանը կարևորեց ուսանողության շրջանում հարցումների իրականացման գործընթացը, որը յուրաքանչյուր կիսամյակ պարբերաբար կազմակերպվում է ֆակուլտետում: Ուսանողին մատուցվում է բավականին տարողունակ հարցաշար, որը ծառայում է ուսումնական գործընթացի կազմակերպման թերությունների բացահայտմանը և առավելությունների ամրապնդմանն ու խթանմանը: Կոչված է նպաստելու կրթության որակի արդյունավետության բարձրացմանը: Զեկուցողն առաջին հերթին անդրադարձավ դեկանի և դեկանատի ստացած միավորներին, որոնք համապատասխանաբար կազմում են 4,79 և 4,73: Նա մասնավորեց, որ ֆակուլտետի կառավարումը բուհում համարվում է ամենակարևոր գործառույթը: Ֆակուլտետի արդյունավետ կառավարմամբ է պայմանավորված ուսանողի մասնագետ դառնալու աստիճանը: Ֆակուլտետի ճիշտ կառավարմամբ միայն կարելի է հասնել մյուս օղակների ներդաշնակ գործունեությանը: Այդ առումով ասվեց, որ ուսանողների կողմից տրված գնահատականը ֆակուլտետի կառավարմանը բավարար է, բայց ոչ հանգստացնող:

Զեկուցողը անդրադարձավ առանձին ամբիոններում ընդգրկված դասախոսների ստացած գնահատականներին: Նկատեց, որ չորս ամբիոնների դասախոսների ճնշող մեծամասնությունը գնահատվել է ավելի քան չորս միավոր: Նախորդ կիսամյակում անցկացված հարցումներից հետո մի շարք դասախոսներ, ովքեր ստացել էին ցածր միավորներ հետևություններ են կատարել և շտկել մատնանշված թերություններն ու սխալները: Դա կարևոր հանգամանք է: Արդյունքների հրապարակումը հնարավորություն կտա կատարելագործման գործընթացը դարձնել անընդհատ և շարունակական: Ամփոփ տվյալներով ֆակուլտետի կառուցվածքում գործող Հայոց լեզվի և գրականության ամբիոնը ստացել է 4,59 միավոր, Մանկավարժության և հոգեբանության ամբիոնը՝ 4,80 միավոր, Պատմության և քաղաքագիտության ամբիոնը՝ 4,53 միավոր, Օտար լեզուների ամբիոնը՝ 4,66 միավոր: Ֆակուլտետի միջին գնահատականը կազմում է 4,62 է: Համեմատություն կատարելով նախորդ կիսամյակում /2013-2014 ուստարվա առաջին կիսամյակ/ կազմակերպված հարցումների

արդյունքների հետ՝ ակնհայտ երևում է, որ թվային արտահայտությամբ ֆակուլտետի բոլոր միավորների արդյունքները աճել են, ինչը ուրախալի է: Սակայն դա չի նշանակում, որ կարելի է բավարարվել ստացած միավորներով և հանգստանալ:

### ***ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝***

Բ. գ. թ., դոցենտ Վ. Ավագյանը, Պ.գ.դ. Ռ. Նահապետյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, Բ. գ. թ., դոցենտ Ա. Սարհատյանը: Նրանք բոլորն էլ կարևորեցին հարցումների գործընթացը: Կատարվեց մի նկատառում. հարցումների համակարգը որոշ ուսանողների համար դառնում են այսպես կոչված «վրեժ լուծելու» գործիք, այսինքն՝ գործում է համարժեքության սկզբունքը: Գնահատում են կողմնակալ ձևով, առաջնորդվելով այն սկզբունքով, թե ինչպես է ժամանակին իրեն գնահատել տվյալ դասախոսը: Եթե դասախոսը ուսանողին կիսամյակային քննությունների ժամանակ գնահատել է բարձր, ապա ուսանողը հարցումների ընթացքում հիմնականում փոխադարձում է նույն գնահատականը: Հակառակ դեպքում՝ դասախոսն արժանանում է համարժեք ցածր գնահատականի:

### ***ՈՐՈՇԵՑԻՆ՝***

- *Ուսանողության շրջանում անցկացված հարցումների արդյունքները ուսումնասիրել և քննարկել ֆակուլտետի բոլոր ամբիոններում՝ հետագայում սխալներից և թերություններից խուսափելու համար:*

### ***ԼՄԵՑԻՆ՝***

Օրակարգի վերջին կետով՝ զեկուցողը հայտնեց, որ մասնաճյուղի Որակի կառավարման հանձնաժողովում պետք է ընդգրկվի ֆակուլտետից մեկ դասախոս: Դեկանը առաջարկեց Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ մ.գ.թ., դոցենտ Վաչիկ Բրուտյանի թեկնածությունը վերոհիշյալ հանձնաժողովում: Նա հիմնավորեց, որ Վաչիկ Բրուտյանը կոմպետենտ է բուհական որակի ապահովման հարցերում և կարող է օգտակար լինել այդ աշխատանքներում:

### ***ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝***

Բ. գ. թ., դոցենտ Վ. Ավագյանը, Պ.գ.դ. Ռ. Նահապետյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, Բ. գ. թ., դոցենտ Ա. Սարհատյանը, հայտնելով իրենց համաձայնությունը:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝**

-Մասնաճյուղի որակի կառավարման հանձնաժողովի համար առաջադրել Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ մ.գ.թ., դոցենտ Վաչիկ Բրուտյանի թեկնածությունը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Վ. Ալեքսանյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ս. Խաչատրյան